ՍԱՄՍԱՆՈՒՄՆ ՀՐԵՇՏԱԿԻՆ Ի ՓԱՌԱՑ

Զիարդ անկաւ արուսեակն
Որ ընդ առաւօտս ծագէր.
Ցանդնդասոյզն ի յատակն,
Ի մշտամութն յայն ստուեր։
Լուսատիւռն այն փայլակ
Ո՞րպէս յերկնից զառ ի վայր
Ի ձոխ ճոկոցն վերնակարգ
Ցերկիր սահէր գլխիվայր։
Սա զերարիւեան հրեշտակ
Եւ լուսեղէն զուտ հոգի
Է՞ր ի խաւար անյատակ
Տարտարոսին ցարդ տքնի։
Անգիւտ կորուստ զատելոյն
Ի ահեղ պատիժ դատողին
Դող և սարսափ սաստկագոյն
Հոգւոյս աղդեն ահագին։
Խկլացնոր մտածմունք
Տանջեն խսպառ զեմ հոգի
Թէ ի՞նչ մեծ էր կոյր յանցմունք
Արարածոյս փանաքի։
Զգթութեամբ Արարչին
Մի՞թէ մեղանք սխալանք
Գերադասիլ յանդգնին,
Որոյ խնամքն են անսահմանք։
Ահա Դաւիթ մեծապէս
Ցանցմամբ՝ զոյգ ընդ մեղային,
Թէ ՝՝ոչ՝՝ մեռցիս, այլ կեսցես,
Առ զաւետիս ցնծալին։
Մեղսաշաղախ Նինուէին
Զաղիր գործոցն և վատթար
Նա խնամովք Հայրենին
Ներումն արար դիւրաբար։
Ի յատակէն խոր գրոյ
Զմանասէն գարշամեղ,
Նա ողորմեալ ըստ գթոյ
Հան ի յաթոռ իւր շքեղ։
Զմեծն ողբամ զանառակ
Զնախանձնոգացն զչարիս,
Որք Արարչին հակառակ
Զար յղացան զկարծիս։

Ի փորձ մտին ընդ Աստուած
Ստունգանեալ պատուիրին
Ցանմահութեանց լեալ ի բաց
Նստան մահու յստուերին։
Բա՛ նա զիարդ գթացեալ
Զերծ սպալին ի վշտաց,
Ի՛ Անճառ սիրով գերյարգեալ
Հան ի պատիւ ճոխ փառաց։
Այո՛ առատ Արարչին
Շատ են խնամոցն հաւաստիք
Անչափ բարձր են ՝՝ անմեկին
Զեղուն շնորհացն արգասիք։
Ընդ այգեգործացն տօթաբարձ,
Ցառաւօտուց մինչ յիրեկ,
Հաւասարաւ տայ նա վարձ
Անաշխատին նորաեկ։
Ի բարձրուղէշ ի ծայրէ
Զժանտաբարոյն բարբարոս
Սիրով ի յէջ նա կոչէր
Զկարճահասակն Զաքէոս։
Զթշուառուհին դատապարտ
Ի պատժողացն ի ձեռաց,
Նա զերծ կացոյց և փարատ
Ցանթուելի մեղանաց։
Սամարացի ցած անուամբ
Ցերկնից յաշխարհ յԵրիքով
Էջ Թանն Աստուած զթութեամբ
Հնամյօժար Հօր կամքով։
Հեղ ի բուժումն Հին Մարդոյ
Գինին աբեան ձէթի շնորհայ
Զմահարար մեղս հոգւոյ
Սքանչելապէս նա լուաց։
Զենաւ Գառնն պատարագ
Ի հաշտութիւն Արարչին
Ընդ ապստամբին անառակ,
Զոր ածն ի փառս առաջին։
Եղեռնագործն աւազակ
Ի յետին շունչն ի խաչին
Առ զաւետիս համարձակ
Ճեպել յԵդէմ վերստին։
Զորս ի հրաշից ոչ գործեաց
Ի փրկութիւն համայնից

Գառն Աստուծոյ մեղսաբարձ
Ստեղծող բնաւս յանէից,
Զի չ'ելք նմա կամք երբէք
Մեղաւորին մեռնելոյ.
Այլ զարձ նորին սրտաբէկ
Գտցէ հեշտեաւ յոյս կելոյ
Կորստական խեղճ հոգի,
Է՞ր ի սոցունց ոչ ուսար
Օրինակացս բազմազգի
Շահիլ փութով քեզ մի ճար.
Ստորանկեալ հէգ փայլակ,
Մինչ ցե՞րբ մնաս դու յամառ.
Հէրիք ջանաս միշտ անյագ
Գերել զմեզ դու խսպառ.
Փորձ քո եղև նշաւակ
Խաբ և պատրանքդ ի նանիր.
Երբ մեծ ջանիւ հակառակ
Նորն Ադամայ զինէիր.
Արդ զէնք, սուսեր քո ի խուփ.
Եւ սունինք քո ի մանգաղ
Եւ ի հեղիւս եղին կուփ
Սրբոյ խաչին այն չքնաղ.
Ցանապատին յանդգնեալ
Փորձ մտնելոյդ զկնի,
Է՞ր ոչ ծանեար մարմնացեալ
Տէրն երկնի և երկրի.
Անագորոյն ապիկար,
Քո յամառ կամքն անխոստով
Մղեն զքիզ չարաչար,
Ի կագ ՝ի գաւ յար վրդով՝.
Գերդեսացւոյն լանրքառով
Որդի էին դաւանեալ՝
Թո՛ղ մաղթէիր անդ լալով
Ողորմիլ քեզ զթացեալ.
Խոզաբարոյ տղմախաղ,
Խոզոց երամն քեզ ի՞նչ շահ,
Ցոր դու մտեր անյապաղ
Սուզեալ ի ծով խեղդամահ.
Տիրական ձայնն կենակոչ
Հանուրց Փրկչին, երբ զՀոգին,
Ի խաւարէ աղջամուղջ
Ազատ արար ած յաստիս.

Է՞ր ոչ զարձար յապաշաւ
Ի քո բարուցն չարաչար,
Գտանէիր անդ զիւրաւ,
Այո՛ Փրկչէն շոյտ քիչ ճար.
Դիտա՛ ոմ խեղջ և թշուառ.
Զի չիք էին ողորմած,
Կամք կորնչիլ վայրաբար
Ումեք ի մի փոքրկաց.
Ո՜հ, թէ լեալ էր քեզ մարմ
Դիմել ի շնորհս Արարչին,
Կալ միշտ հլու և հանդարտ
Ի սպաս կամաց սուրբ Նորին.
Աշխարհ անշուշտ դադարէր
Ի յար վրդով տատանմանց
Եւ կանխաճառն կատարէր
Մարգարէին այն ասած.
Թէ գայլք գառինք միասին
Հեզիկ ի մարգ ծաղկաւէտ,
Անհաշտ առիւծն պէս եղին,
Ցարդ ուտիցեր հեզ համեստ.
Ճոխն աղքատին անխնայ
Ճամբիցէր հաց և զգեստ,
Որբոց այրեաց սիրով նա
Տայցէր ապրուստ և զուտեստ.
Եղբայր զեղբարբ քոյր զքերբ,
Հարսն համեստ անձնազոհ,
Ի սպաս փարէր զսկեսերբ.
Ծնօղ զորդւոյ լինէր զոհ.
Նախանձ, մախանք դարշ և գող,
Սուտ և սատարք սնոտի.
Դիւթք և կախարդք հմայող,
Եւ որք սոցուն են սակի.
Տեղի տուեալ զերթ խաւար
Մերժ ի լուսոյ արեգին,
Եւ փոխանակն կայսրարար
Տիրէր միշտ սէր ընկերին.
Այլ Տէր Փրկիչ Տէր Աստուած,
Խոր են խորհուրդ՝ անքնին
Մահկանացուք ստեղծուած
Զիա՛րդ գիտել յանդգնին.
Թէ չեղանէր Գողգոթայ,
Գոռոզ հսկայն ահագին,

Իսրայեանն ի ճակատ,
Տիրաճամբար բանակին,
Ի՞ւ ստանայր յաղթանակ
Պարսպաքարին հարուածով.
Դաւիթ զգովեստ ձայն արձակ
Ի Հրէուհեաց պերճ շքով,
Վիշտ և վտանգ ծովածուփ
Զտեն զմարդն զերթ ոսկի,
Երանեկանն հուպ առ հուպ
Առնել փառաց արժանի,
Յորինակացս հետևի
Թէ դեւք միջոց և պատճառ
Են մեզ մարդկանց հողածնի
Յաւէրժ փառացն այն անճառ,
Յակնարկութեանց Արարչին
Դարձ և կորուստն սահմանի
Ըստ նախնկար առակին
Փարաւօնեանն խիստ սրտի,
Կամ՝ ըստ կաւեայ անօթոց
Բազմատեսակ ամանաց
Ի ճիշդ բանից սուրբ գրոց
Պարտիմ՝ լինել իրազգաց,
Զի ոմն պատիւ ոմն յանարգ
Ի փորձ ձեռացն անդստին
Բրգին կազմին կարգ առ կարգ
Ստեղծուածոցս ի քննին,
Բարի են կամքդ Արարիչ,
Ամենախոր քո գաղտնիք
Այլ մարդն հող և ոչինչ
Խելակարօտ զերթ մանկիկ,
Խորհուրդքս մեր զանգիտող,
Եւ աղբաղբիկ մեր հնար
Առ ոտս անկեալն չգտող.
Զգտիմք աստեղց քննել շար,
Արդ սուտ վիճին շատ մարդիկ
Թէ դեւք կարծիք են մտաց,
Թէ ըստ իրին չէ և չիք,
Ինչ լուսեղէն արարած,
Որ մոլորեալ միշտ անդարձ
Մնայ, ի վիհ կորստեան,
Եւ զերթ յիմար ընդ Աստուած
Ի Մարտ զինի յաւիտեան.

Ս. Յարութիւն Աղիբեգեանց

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՒԷՐ

ՇՈՒՇԱՆԱՑ ՏԻԿՆՈՋ ՖՈՒԱՆԳԻԼԵԱՆՑ

Ջանիւք գերապատիւ Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսի Վեհապետեանց՝ Կառավարչին թեմին Աստրախանայ՝ մի փառաւոր և մեծ թաւշեայ (մախմուր) վարագոյր վասն Աւագ սեղանոյ Մայր Աթոռոյս Նուիրեց Աստրախանաբնակ բարեպաշտուհի տիկին Շուշան Մելքոնեանց Ֆուանգիւլեանց՝ ի յիշատակ հանգուցեալոց ի Տէր՝ ամուսնոյն Յակոբայ Ստեփաննոսեան Ֆուանգիւլեանց՝ և դստերն՝ օրիորդի Մանուշակայ Յակոբեան։

Յիշեալ առաքինի տիկնոջ ջերմեռանդութիւնը կը գովեմք և հրապարակաւ կը յայտնեմք մեր խորին շնորհակալութիւնը, միանգամայն կաղաչեմք զԱստուած, զի լուսաւորեսցէ զՀոգիս առն իւրոյ և դստերն, և արժանացուսցէ ի լոյս փառաց երեսաց իւրոց յերջանիկ կեանս յաւիտենականութեան։

ՍՈՎ Ի ՍՊԱՀԱՆ ԵՒ Ի ՇՐՋԱԿԱՅՍ

Յաւ ի սիրտ կը փութամք դուժել ի քանի ամսոց հետէ ի Սպահան և ի շրջակայսն բնակեալ մերազնեայց մեծ տագնապներով և տառապանքներով կրած անասելի և միանգամայն մահ սպառնացող սովը։

Վեհ. Կաթողիկոս լսելով ողորմելի ազգայնոցս ողբալի վիճակը, ըստ իւրում սեպուհ և սրբազան պարտաւորութեան՝ մանաւանդ թէ առաւել աղեխարշ և սրտա-